ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերաբերմունքը հեռավար ուսուցման նկատմամբ

Որակական հետազոտություն

Հետազոտությունը նախաձեռնել և իրականացրել է ՀԱԱՀ ՈԳԱ կենտրոնը

www.anau.am

qualityassurance@anau.am

Հուլիս 2020, ՈԳԱ Կենտրոն, ՀԱԱՀ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նկարագրություն..... 3
Հիմնական բացահայտումներ. 6

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

ՆՊԱՏԱԿ	▪ Ուսումնասիրել ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական կազմի (հետագայում՝ ՊԴ կազմի)՝ հեռավար ուսուցման նկատմամբ վերաբերմունքն ու ընկալումները; ▪ Վերհանել կատեգորիաներ քանակական հետազոտության համար խնդրի հետագա առավել լայն և մասշտաբային ուսումնասիրության նպատակով:
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ	▪ Ուսումնասիրել ՀԱԱՀ ՊԴ կազմի՝ հեռավար դասավանդման փորձը. առավելություններն ու սահմանափակումները; ▪ Գնահատել նրանց վերաբերմունքը հեռավար դասավանդման որակի, վերջնարդյունքների ապահովման, գիտելիքի գնահատման, դասապրոցեսի կազմակերպման և այլնի նկատմամբ; ▪ Վեր հանել խոչընդոտները, խնդիրները, որոնց ՊԴ կազմը բախվել է հեռավար դասավանդման ժամանակ ▪ Գնահատել ՊԴ կազմի կարիքները; ▪ Գնահատել ՀԱԱՀ-ի ուժեղ և թույլ կողմերն ըստ ՊԴ կազմի:
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆՏՐԱՆՔ	▪ **Որակական հետազոտություն**. ֆոկուս-խմբային քննարկումներ* ՀԱԱՀ ՊԴ կազմի հետ և խորին հարցազրույցներ** ամբիոնների վարիչների հետ: ▪ Քննարկումները կազմակերպվել են առցանց՝ ZOOM հարթակի միջոցով: ▪ Ընտրանքի ծավալ՝ 2 ֆոկուս-խմբային քննարկում և 5 խորին հացազրույց: ▪ Կիրառվել է բազմաստիճան ընտրանք հնարավորինս ապահովելու մասնակիցների՝ տարբեր չափանիշներով ընդգրկվածությունը: *Ընտրանքի կառուցվածքը մանրամասն ներկայացված է slide 5-ում:*
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	18.07.20– 27.07.20

- *Ֆոկուս խմբային քննարկումը որակական հետազոտության մեթոդ է, որը մեկ սենյակում միավորում է 6-10 հոգի՝ քննարկելու հետազոտության առարկան և վերհանելու դրա նկատմամբ թիրախային լսարանի վերաբերմունքը: Քննարկումը վարում է հատուկ պատրաստված մասնագետը, որն ունի նախապես մշակված հարցերի ցանկ և դրանց շուրջ ծավալում է քննարկումը:*

*** Խորին հարցազրույցը, որը ևս որակական հետազոտության մեթոդ է, կիսակառուցվածքային հարցազրույց է, որը ազատություն է տալիս թե, զրուցավարին, թե հարցվողին, վերհանել հետազոտության առարկային առնչվող կետեր:*

ԸՆՏՐԱՆՔԻ ԲԱՇԽՈՒՄ

- Ֆոկուս-խմբային քննարկման համար մասնակիցների հավաքագրումը կատարվել է ամբիոնների վարիչների միջոցով՝ համաձայն հետևյալ չափանիշների՝
  - ✓ **Սեռ**՝ արական/իգական (50%/50%)
  - ✓ **Ամբիոն**՝ ընդգրկվել են տարբեր ուղղվածություն (օր՝ թողարկող/սպասարկող, մասնագիտական/ոչ մասնագիտական ամբիոններ) ունեցող ամբիոններից դասախոսներ:
  - ✓ **Դասավանդման կազմակերպման ձև**՝ ՀԱԱՀ-ում առկա և հեռավար դասավանդման փորձ ունեցող:
  - ✓ **Տարիք**՝ այս չափանիշի հիման վրա կազմվել է երկու խումբ: «Երիտասարդներ» (Մինչև 45տ. խումբ) և «Մեծահասակներ» (45տ+ խումբ):
- Ամբիոնների վարիչների ընտրությունը ևս կատարվել է վերը նշված չափանիշների հիման վրա:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

ՀԵՌԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ԴՐԱԿԱՆ ԿՈՂՄԵՐՆ ԸՍՏ ՊԴ ԿԱԶՄԻ

ԴՐԱԿԱՆ

ՀԱԱՀ ՊԴ ԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԵՌԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՉԵԶՈՔ Է. ԽԻՍՏ ԾԱՅՐԱՀԵՂ ՄՈՏԵՑՈՒՄ (ՄԻԱՆՇԱՆԱԿ ԿՈՂՄ ԿԱՄ ԴԵՄ) ՉԻ ՆԿԱՏՎԵԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԱՌՎԱԾ ՏԱՐԲԵՐ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԿՈՂՄԻՑ: ԱՎԵԻՆ, ԿԱՐԵՎՈՐՎՈՒՄ Է ՀԵՌԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ, ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄՈԴԵԼԻՆ ԶՈՌԻԳԱՀԵՌ, ՀԱՏԿԱՊԵՍ ՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ:

- Որպես հեռավար կրթության դրական կողմ նշվում են.
  - **Ուսանողների բացակայությունների ցուցանիշի կրճատումը** → Երևույթը հատկապես նկատելի է հեռակա և աշխատող ուսանողների շրջանում:
  - **Ռեսուրսների խնայողությունը** (ժամանակային, ֆինանսական ծախսեր) → Երիտասարդ ՊԴ կազմի կողմից դրական է գնահատվում հատկապես ժամանակի տնտեսման հանգամանքը, ինչի շնորհիվ ավելի շատ ժամանակ է հնարավոր տրամադրել գիտական գործունեության, դիպլոմային աշխատանքների ղեկավարման, մասնավոր հատվածում գործունեություն իրականացնելու և այլնի վրա:
  - **Վիզուալ նյութերի ցուցադրման հնարավորությունը** → սլայդշոուներ, նկարներ, տեսահոլովակներ ցուցադրելու, նյութերը էլ-փոստով ուղարկելու հնարավորությունները մեծ են:
  - **Գիտելիքի ստուգման մեխանիզմների բազմազանությունը** → Երիտասարդ տարիքի դասախոսներն առավել կարևորում են quiz-ների, թեստերի միջոցով գիտելիքի ստուգման, իսկ 45տ+ տարիքի դասախոսները՝ քննությունները բանավոր անցկացնելու հնարավորությունները:
    - **Հեռավար կարգով դիպլոմայինների պաշտպանության կազմակերպման առնչությամբ** հետազոտությանը մասնակցած դասախոսներից **ոչ ոք բացասական դիրքորոշում չի արտահայտել:**
  - **Համակարգչային գրագիտության բարձրացումը** → Երևույթը շեշտադրվում է հատկապես 45տ+ տարիքային խմբի դասախոսների շրջանում: Ծրագրային դժվարությունները հիմնականում հաղթահարվել են բուհի SS կենտրոնի կամ երիտասարդ կոլեգաների օգնությամբ: Այս հարցում որոշ դեպքերում աջակցություն են ցուցաբերել նաև ընտանիքի անդամները:



ՄԵՋԲԵՐՈՒՄ

. . . Օնլայնը ընդլայնում է դասախոսի գիտական, մասնագիտական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունները, օր. գիտական փորձ անել, գումարով աշխատանք անել, հոդված գրել: Իսկ համալսարանում դա հնարավոր չէ անել. . .

. . . Սկզբում դժվար էր, մեզ համար անտվոր էր, բայց ընտելացանք, հարմարվեցինք. . .

. . . Չեմ կարող ասել, որ հեռավարը շատ վատ է, եկեք հանենք, որովհետև փորձը ցույց տվեց, որ շատ են հաճախում, մի բան կտվորեն ոնց էլ լինի. . . :

ՀԵՌԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐՆ ԸՍՏ ՊԴ ԿԱԶՄԻ



ՄԵԶԲԵՌՈՒՄ

. . . Ես դժվար եմ համակերպվում, քանի որ լսարանին չեմ զգում: Ես սիրում եմ կանգնել լսարանի առաջ և մոտիվացնել. . .

. . . Ուսանողը անտարբեր է, կարող է անկողնու մեջ պառկել, մեքենայի մեջ լինել: Չկա հուզմունք, չկա մտածմունք. . .

. . . Ավանդական կրթության ժամանակ կարողանում ես կառավարել լսարանը, հասկանում ես՝ ըմբռնեցի՞ն, թե՞ ոչ: Իսկ էստեղ չգիտես՝ օդի մեջ ես: Լսարանում կանչում ես գրատախտակի մոտ, ստիպում ես մտածի, գծի. . .

. . . Ես պատրաստեցի շատ լավ տեսական տեխնոլոգ՝ ամենացածր մակարդակով պատրաստված ուսանող: Ինչքան գոհ էի ինձանից, այնքան դժգոհ էի իրենց մասնագիտական հմտություններից. . .

ԲԱՑԱՍԱԿԱՆ

- Որպես ուսուցումը հեռավար կազմակերպելու բացասական կողմ նշվում են՝
  - **Հոգեբանական խոչընդոտները** → ամենաշատ բարձրաձայնված խնդիրն է հեռավար կրթության համար՝
    - ✓ **Աչքի կոնտակտի բացակայությունը** → լսարանի արձագանքը ստանալու, լսարանի հետ հետադարձ կապի հնարավորությունները խիստ սահմանափակ են, ինչը ճնշող է դասախոսների համար:
    - ✓ **Ուսանողի նկատմամբ վերահսկողության բացակայությունը** → ուսանողին դասի մեջ ներգրավելու սահմանափակ հնարավորությունները → ուսանողները հնարավորություն ունեն ապահովել իրենց ներկայությունը դասին և ցանկացած պահի խուսափել դրանից տեխնիկական խնդիրների պատճառաբանությամբ:
    - ✓ **Ուսանողների պատասխանատվության ցածր աստիճանը** → ուսանողների կողմից հաճախ նկատվում է անտարբեր, անլուրջ մոտեցում դասապրոցեսի նկատմամբ, արհեստական ներկայության ապահովում:
  - **Գործնական դասերի կազմակերպումը** → այս տեսանկյունից բոլոր դասախոսները դժվարացել էին լիարժեք հասնել կրթական վերջնարդյունքներին: Հիմնականում բացը լրացվել է թեմայի հետ առնչվող տեսանյութերի ցուցադրման միջոցով:
  - **Դասապրոցեսի արդյունավետ կազմակերպման հնարավորությունների բացակայությունը**, մասնավորապես՝
    - ✓ Ներկա-բացակայի, տեսախցիկները, ձայները միացնել/անջատելու վրա ծախսվող ժամանակի ծավալը
    - ✓ 40 րոպեում դասապրոցեսը կազմակերպելու հանգամանքը
    - ✓ Խմբային քննարկումների կազմակերպման սահմանափակումները
    - ✓ Գիտելիքի ստուգման հնարավորությունները ժամանակի տության պատճառով:

ՀԵՌԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐՆ ԸՍՏ ՊԴ ԿԱԶՄԻ



ՄԵԶԲԵՌՈՒՄ

. . . Ամբողջովին տրվեցինք հեռավար կրթությունը կազմակերպելուն, և մեր գիտական գործունեությունը մնաց: Միգուցե հետագայում վարժվենք և ժամանակ ունենանք գիտությամբ զբաղվելու . . .

. . . Ստիպել են ՄԿԾ գրել, դասախոսություն լսել, ու ես դրա համար չեմ վարձատրվում: Այն ինձանից խլեց մեկ տարի. . .

. . . Ուսանողը կորցրել էր սուբորդինացիան դասախոսի նկատմամբ: Երբ իրեն հարմար էր, գրում էր, և ակնկալում էր պատասխան. . .

ԲԱՑԱՍԱԿԱՆ

- **Տեխնիկական խոչընդոտները**, մասնավորապես՝ անհրաժեշտ անձնական տեխնիկական համակարգերի (համակարգիչ, որակյալ ինտերնետ կապ) տնօրինում, համակարգչային ծրագրերի տիրապետում: Խնդիրը բարձրաձայնվում է թե դասախոսների, թե ուսանողների համար:

- **Դասախոսի ծանրաբեռնվածության մեծացումը,** մասնավորապես
  - ✓ Վիզուալների պատրաստման վրա ծախսվող ժամանակ
  - ✓ Ուսանողների հետ անհատական շփումների ընդլայնում դասախոսի «հասանելիության» մեծացման հաշվին → ուսանողների կողմից դասախոսի հետ կապի հաստատում աշխատանքային ժամերից դուրս և հանգստյան օրերին:
  - ✓ Քննությունների անցկացման տևողություն (10ժ+)
  - ✓ Լրացուցիչ ադմինիստրատիվ աշխատանքով զբաղվելու պարտականություններ → դասախոսությունների վերահսկողություն, ՄԿԾ-ների մշակում և այլն:

- **Քննությունների ժամանակ ուսանողների գիտելիքները օբյեկտիվ գնահատելու հնարավորությունների բացակայությունը** → վերահսկողության մեխանիզմների բացակայության շնորհիվ, ուսանողները հնարավորություն ունեն քննության ժամանակ օգտվել տարբեր աղբյուրներից, ինչը նվազեցնում է դասախոսի՝ ուսանողին օբյեկտիվ գնահատելու հնարավորությունը:

ՊԴ ԿԱԶՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Իդեալական

Ռացիոնալ

Ունիկալ պահանջմունքներ

“Wows”

- **Տեխնիկական զինվածություն** → Բուհի կողմից անհատական համակարգչի, ինտերնետ կապի, առանձնասենյակի տրամադրում:
- **Գիտական տեղեկատվական բազաների հասանելիություն** → դրանց նկատմամբ մուտքի արտոնություններ:
- **Գիտական գործունեություն ծավալելու հնարավորություններ** → գիտական ծրագրերում ընդգրկվելու հնարավորություններ բուհի նախաձեռնությամբ, գիտական համագործակցության հնարավորություններ (վերապատրաստումներ, փոխանակման ծրագրեր և այլն) արտերկրի բուհերի հետ:

Ցանկալի

Տարբերակող բնութագրիչներ, որոնք կարևոր են դառնում պարտադիր պահանջմունքների բավարարումից հետո

- **Տեղեկատվական թափանցիկություն** → Բուհին առնչվող ներքին ինֆորմացիայի ճկուն և թափանցիկ հասանելիության ապահովում հատուկ հարթակների միջոցով, թե ուսանողների, թե դասախոսների համար:
- **Գնահատման մեխանիզմների խստացում** → սկզբունքների վերանայում, անաչառության բարձրացում:
- **Լսարանների ծանրաբեռնվածություն** → փոքր խմբերով դասապրոցեսի կազմակերպում (մինչև 15 ուսանող)
- **Վերապատրաստումներ** → հաղորդակցման, լսարանի կառաարման, ժամանակի կառավարման հմտությունների զարգացում, նոր ներդրված առարկաների վերաբերյալ վերապատրաստումներ
- **Արտաքին համագործակցություն** → Փորձի փոխանակում, այլ բուհերի լաբորատոր հնարավորությունների օգտագործում:
- **Մոտիվացիա** → կոնֆերանսների մասնակցության, ամսագրերի բաժանորդագրության հնարավորություններ, պատվոգրեր, դասախոսների ատեստացիա և դասակարգում:
- **Տեխնիկական ապահովություն** → ՈՒՓՏ-ների սենյակների տրամադրման ազատ հնարավորություններ, տեխնիկապես հագեցած լսարանների առկայություն

Պարտադիր

Բազային պահանջմունքներ– առանցքային պահանջներ կրթության նկատմամբ

- **Ինքնակրթություն**→ ժամանակին համահունչ գիտելիքների (մեթոդական, առարկայական) թարմացում
- **Ներքին համագործակցություն** → առարկայական ծրագրերի ընտրության, ուս. պլանների մշակման ժամանակ դասախոսների ներգրավվածություն
- **Ոչ խիստ ծանրաբեռնվածություն** → ադմինիստրատիվ ֆունկցիաներով դասախոսների հնարավորինս քիչ ծանրաբեռնում
- **Ուսանողների կազմ** → ընդունելության չափանիշների բարդացում, մոտիվացված ուսանողների ընդունելություն

ՀԱԱՀ-Ը ՊԴ ԿԱԶՄԻ ԱՉՔԵՐՈՎ

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **ԲՈՒՀի մասնագիտական ուղղվածությունը** → մենաշնորհային մասնագիտությունները, որոնք պատրաստում է միայն բուհը;
- **Միջազգային համագործակցությունների հնարավորությունը** → փոխանակման ծրագրերի (օր, էրազմուսի ծրագրին մասնակցելու) հնարավորությունները, փորձի փոխանակման հնարավորությունները;
- **Արդիականացումը** → լաբորատորիաների վերազինումը, ժամանակակից մեթոդների ներդրումը, ժամանակին համահունչ քայլելը;
- **Վերապատրաստումների հնարավորությունները** → գնահատվում է թափանցիկ և հասանելի;

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Ընդունելության չափանիշների և սկզբունքների վերանայում**, խստացում;
- **Գիտելիքի ստուգման մեխանիզմների վերանայում**, խստացում → թեստային համակարգի ներդրում, «open book exam» մոտեցման կիրառում;
- **Դասախոսների մասնագիտական և դասավանդման կարողությունների հզորացում** → գիտական գործունեության մեջ ներգրավում, գիտական գործունությամբ զբաղվելու խրախուսում, պայմանների և հնարավորությունների ընձեռում:

ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **ԲՈՒՀ-ի վարկանիշը** → թույլ է մրցակից բուհերի համեմատ: Չի գրավում մեծ ընդունակություն ունեցող պոտենցիալ ուսանողներին;
- **Ուսանողների զարգացվածության աստիճանը** → ընդունելության ցածր չափանիշները: Այս գործոնը փոխկապված է նախորդ կետի հետ;
- **Լաբորատոր դասերի ժամանակ խմբերի մեծությունը** → դժվարացնում է յուրաքանչյուր ուսանողի նկատմամբ անհատական մոտեցում ցուցաբերելու հնարավորությունը;
- **Արտադրության հետ կապի հնարավորությունները** → մասնավոր սեկտորի հետ հարաբերությունների բացակայությունը կամ թույլ արտահայտված լինելը;
- **Դասախոսների գիտական գործունեության ցածր մակարդակը** →Կրում է անհատական բնույթ, բուհի կողմից խրախուսման մեխանիզմները թույլ են (վարձատրություն, հասանելիություն գիտական ամսագրերին և այլն);
- **Դասախոսի նկատմամբ վերահսկողությունը** → ընկալվում է որպես անվստահություն վերջինիս նկատմամբ:

ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

- **Մոտիվացիայի բացակայությունը** → թե դասախոսների (վարձատրություն, պարգևատրումներ, գիտական կոնֆերանսների մասնակցություն ըստ ցույց տվա արդյունքների), թե ուսանողների մոտ (մրցակցության բացակայություն, կորցնելու վախի բացակայություն);
- **Դասախոսական կազմի մակարդակը** → ժամանակին համահունչ կանոնավոր և շարունակական վերապատրաստումների բացակայությունը;
- **Տեխնոլոգիական հագեցվածությունը** → համակարգիչների բացակայությունը, լսարանների տեխնիկական հնարավորությունները:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿ

- Չնայած հեռավար կրթության ժամանակ ծագած հաճախ հնչող տեխնիկական խոչընդոտներին՝ այնուամենայնիվ, կրթական պրոցեսի վրա խիստ բացասական ազդեցության դեպքեր հետազոտության մասնակիցները չեն նշում: Այստեղ կարևորվում է բուհի SS կենտրոնի դերը, որն անընդհատ ցուցաբերել է օժանդակություն և հարթել ծագած խնդիրները հատկապես հեռավար կրթության առաջին մեկ ամսվա ընթացքում:

- **Հեռավար ուսուցումը դիտվում է որպես կրթության կազմակերպման հետագա անխուսափելի բաղկացուցիչ,** հատկապես՝
  - ✓ տեսական առարկաների դասավանդման դեպքում
  - ✓ հեռակա ուսանողների համար
  - ✓ մարզերում բնակվող ուսանողների համար

ՀՆԱՐԱՎՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

- Վեր հանել ՊԴ կազմի ցանկը, ովքեր ունեն տեխնիկական աջակցության կարիք և հնարավորության դեպքում տրամադրել աջակցություն:
- Դիտարկել նաև համակարգչային գրագիտության բարձրացման հնարավորությունները ՊԴ կազմի մոտ: օր Microsoft office, մասնավորապես Word, PPT ծրագրերով աշխատելու, պլայդ շոուներ կազմակերպելու հմտություններ: ZOOM ծրագրից օգտվելու հմտություններ՝ խմբային աշխատանքներ կատարելու, դասը տարբեր գործիքների կիրառությամբ վարելու հմտություններ:

- Դիտարկել և ներդնել հեռավար կրթությունը որպես բուհում կրթության կազմակերպման կարևոր ռազմավարական ուղղություն, հատկապես տեսական առարկաների դասավանդման համար: Այն հնարավորություն կտա ընդլայնել ուսանողների ներգրավվածության աստիճանը (հատկապես մարզերի, հեռակա ուսանողների համար), արտերկրից նեղ մասնագետների՝ դասախոսական անձնակազմում ներգրավելու հնարավորությունները:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿ

- **Կրթական պրոցեսը հեռավար եղանակով լիարժեք կազմակերպելու հնարավորությունները բացակայում են** → շեշտադրվում է հատկապես գործնական պարապմունքների, լաբորատոր փորձերի, ՈՒՓՏ-ներ այցելությունների սահմանափակ հնարավորությունները: Այս տեսանկյունից ցածր է գնահատվում կրթական վերջնարդյունքներին հասնելու հնարավորությունը:

- **Ժամանակի արդյունավետ կազմակերպման և կառավարման հմտությունները հաճախ բացակայում են** հեռավար եղանակով դասապրոցեսը, ուսանողների հետ շփումները կազմակերպելիս:

- **Քննությունների կազմակերպման և անցկացման հստակ մեխանիզմները և հմտությունները բացակայում են:**

ՀՆԱՐԱՎՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

- Մշակել և ներդնել գործնական դասերը կազմակերպելու մեխանիզմներ՝ հաշվի առնելով COVID19-ով պայմանավորված անհրաժեշտ անվտանգության միջոցառումները:
- Ուսումնասիրել և տեղայնացնել միջազգային ու տեղական բուհերի՝ հեռավար եղանակով կազմակերպված գործնական դասերի հաջողված փորձերը:

- Վերապատրաստումներ իրականացնել բուհի ՊԴ կազմի հետ ժամանակի կառավարման հմտությունների զարգացման նպատակով:
- Դիտարկել հեռավար եղանակով դասապրոցեսի տևողության վերանայման հնարավորությունը մինչև 70 րոպե:

- Մշակել և ներդնել հեռավար եղանակով գիտելիքների ստուգման մեխանիզմներ (թեստեր, Quiz-ներ)՝ հաշվի առնելով առարկաների առանձնահատկությունները